

Մեծ քանակությամբ *պուտրա* կսպառի:

18 - 25 Օգոստոս

Մնանկություններ:

Թաղական մը պզտիկ գումար մը կ'առնէ թաղին սնդուկէն եւ իւր աղջիկը կկարգէ:

Պատրիարքարան մը քանի մը պաշտօնեաներ կճանրէ, խնայողութեան պատճառաւ:

Կօշկակար մը քաղաքական յօդուած մը կհրատարակէ:

Ամպամած, պիտի անձրեւէ:

25 - 31 Օգոստոս

Զովութիւն. գիշերները մի՛ նստիք ծովեզերքը: Մժղուկներէն հանգիստ չկայ: Յիսունըհինգ տարու կին մը հինգ հարիւր ոսկի կխոստանայ հետը կարգուողին:

Այս ամսոյս մէջ ծնող մանչերն ալ աղջիկներն ալ բախտաւոր կ'ըլլան. ազգը պէտք ունի անանկ մանչերու եւ աղջիկներու:

ՄԵՊՏԵՄԲԵՐ

1 - 8 Սեպտեմբեր

Մերթ անձրեւ, մերթ արեւ, ուստի –

Մերթ արտասուք, մերթ ժպիտ:

Մի՛ լայք, Աստուած ողորմած է:

Առուտուրները դադրեցան. հարուստներն աղքատներու վիճակը չեն ուզեր իմանալ:

9 - 16 Սեպտեմբեր

Իրաց վիճակը կմնայ եւ միեւնոյնը. թէեւ տիւ եւ գիշեր կհաւասարին, բայց հասոյթը եւ ծախքը չեն հաւասարիր. ծախքը աւելի մեծ է: Աւելի աղէկ էր, որ տիւր քիչ մը մեծ ըլլար եւ ծախքը պզտիկ: Կնիկները այս լեզուէն չեն հասկնար եւ էրիկներուն գլուխը կ'ուռեցնեն աշնան նորաձեւութեան պատրաստուելու համար: